«ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 28-ի N 1152-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----- ---------- 2018 թվականի N -------- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 1152-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 28-ի «Անտառների պետական մոնիտորինգի համակարգի ներդրման մասին» N 1152-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 3-րդ կետի բ) ենթակետից հետո լրացնել նոր բ^{1}) կետ հետևյալ բովանդակությամբ.

« բ^{1}) աշխարհատեղեկատվական համակարգի և հեռազննման տեխնոլոգիաներով հետազոտությունների իրականացումն է.»

- որոշման 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1 կետ հետևյալ բովանդակությամբ.

«3.1 Թույլատրել «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) աշխարհատեղեկատվական համակարգի և հեռազննման տեխնոլոգիաներով հետազոտությունների արդյունքների իրացում՝ լիազոր մարմնի համաձայնությամբ».

2) գյուղատնտեսական բնագավառի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների ուսումնական պրակտիկաների կազմակերպումը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: